

«ԱԼ-ՄԵՏ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գունավոր մետաղների թափոնների
վերամշակման արտադրամասի

*Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ*

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ

տնօրեն՝  Վ. Թևոսյան



Մասիս – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ձեռնարկի ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	3
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ.....	3
3. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	3
4. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
4.1. Տեղադիրքը.....	5
4.2. Կլիմայական պայմանները.....	6
4.3. Օդային ավազան	11
4.4. Ջրային ռեսուրսները	12
4.5. Հողերի բնութագիրը	14
4.6. Կենսաբազմազանություն	14
4.6.1. <i>Բուսական աշխարհ</i>	14
4.6.2. <i>Կենդանական աշխարհ</i>	15
4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	15
4.8. Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները	16
5. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	19
5.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	19
5.2. Գազամաքրման համակարգ	20
5.3. Օգտագործվող նյութեր և բնառեսուրսներ.....	20
5.4. Արտանետումներ, արտահոսքեր և արտադրական թափոններ	21
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	22
6.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը.....	22
6.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները	22
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր	24

1. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Սույն նախաձեռնության ձեռնարկող է հանդիսանում «ԱԼ-ՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերությունը գրանցված է ք. Երևան, Արովյան փ. 35/5 հասցեում, գրանցման համար՝ 273.110.1224021:

Ընկերությունը մասնագիտացված է մետաղների և այլ արտադրական թափոնների գործածության ոլորտում:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, Արարատի մարզ, համայնք Մասիս, գ. Սայաթ-Նովա, Մասիս-Ռանչպար խճուղի 10/1:

Տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում, շրջակայքում գործում են այլ արտադրական կազմակերպություններ, սպասարկման օբյեկտներ և պահեստային տարածքներ:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայացվող գործունեության անվանումն է՝ գունավոր մետաղների թափոնների վերամշակում, մասնավորապես՝ գնվելու է գունավոր մետաղների ջարդոն, ձուլվելու և արտադրվելու են ձուլակտորներ:

Տարածքը հանդիսանում է Վահան Եղիազարյանի սեփականությունը /համապատասխան փաստաթղթերի պատճենները կցվում են/, վկայականի համար՝ 04012023-03-0045, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակություն, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրքը (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրքը (04.6.2002թ.),

3. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004 թ.),
 4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքը (07.02.2012թ.),
 5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (01.11.1994թ.),
 6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (21.06.2014թ.),
 7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (11.04.2005թ.),
 8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27.11.2006թ.),
 9. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-52, 03.04.2000թ.),
 10. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-22, 23.11.1999թ.),
 11. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշումը,
 12. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը,
 13. ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի թիվ 781 որոշումը,
 14. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը,
 15. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշումը,
 16. Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերը (СН 245-71 Санитарные нормы проектирования промышленных предприятий)
 17. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրամանը «Ադմոլկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին
 18. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրամանը «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրաբույժային) հիգիենիկ նորմերը ՀՆՆ 2.2.4-009-06 հաստատելու մասին»
 19. «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.06.2003թ.-ի N 121-Ն որոշումը:
- Համաձայն Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի (СН 245-71 Санитарные нормы проектирования промышленных предприятий) նախատեսվող գործունեության համար սահմանված են սանիտարապաշտպան գոտու ապահովման վերաբերյալ պահանջներ, ըստ որոնց

մինչև 3000 տ տարեկան արտադրողականությամբ գունավոր մետաղների ձուլարանների համար ՄՊԳ է սահմանված 500 մ:

Նախատեսվող գործունեության պլանավորման և հետագա իրականացման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու թափոնների գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննության երկու փուլով:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Տեղադիրքը

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին:

Քաղաքի միջին բարձրությունն է ծ.մ.-ից կազմում է 854 մ, մակերեսը՝ 5.7 կմ²:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Նախատեսվող գործունեությունը ծավալվելու է համայնք Մասիս, գ. Սայաթ-Նովա, Մասիս-Ռանչպար խճուղի 10/1 հասցեում: Գործարանը շրջապատված է ամայի տարածքներով, գործարանի սահմանից 60 մ հեռավորության վրա հոսում է Հրազդան գետը:

Տեղանքի իրադրային սխեման բերված է նկար 1-ում:

Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»- ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A = 0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

4.2. Կլիմայական պամանները

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Մասիս քաղաքին բնութագրական են շոգ և չորային ամառները: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 854 մետր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող կայանը Արտաշատի օդերևութաբանական կայանն է, այդ իսկ պատճառով դիտարկվել և օգտագործվել են Արտաշատի օդերևութաբանական կայանի տվյալները, որի դիտարկումների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակների տեսքով:

Աղյուսակ 4.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	- 29	43

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
															ամենացուրտ ամիս	ամենատաք ամիս
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32


Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութա- բանական կայան	Տեղումների												Ձնածածկույթ, մմ			
	քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Առավելագույն տասնօրյակային բարձրությունը (սմ)	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը	
	Ըստ ամիսների											տարեկան				
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43			

Աղյուսակ 2.4. Քամու պարամետրերը



Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Մասիներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Մնողությունների կատեգորիան, %	Միջին ամսական արագություն, մ/վ	Միջին տարեկան արագություն, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակությունը, %	Հաշվարկային արագությունը, մ/վ		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արտաշատ	920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	0.4	7	21	24	26
			1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	14	74			0.6		
			1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	24	80			0.4		
			1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3							
		Հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	16	85			0.3		
			1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2							

Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա



Նկար 2. Տարածքի սխեման WGS-84 (ARMREF 02) կոորդինատներով

Արարատի մարզ
Սայաթ Նովա համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 03-082-0308-0010
Մասշտաբ 1: 1000



սպասարկման գրասենյակ

4.3. Օդային ավազան

Մասիս քաղաքի, այդ թվում Սայաթ-Նովա գյուղի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Սայաթ-Նովա գյուղում չկան ՊՈԱԿ-ի դիտակետեր, և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՊՈԱԿ-ի հաշվարկային տվյալների, հաշվի առնելով, որ մոտակա՝ Նորմարգ և Սիս գյուղերի բնակչության թվաքանակը չի գերազանցում 10 000-ը, օդային ավազանում ֆոնային աղտոտվածությունը կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.02 մգ/մ³,
- անօրգանական փոշի՝ 0.2 մգ/մ³:

ՇՄԱԳ հիմնական փուլում նախատեսվում է կատարել գետնամերձ օդային շերտից նմուշառում և «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիայում որոշել օդային ավազանի աղտոտվածության ցուցանիշները:

4.4. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:

Հրազդան գետն ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավարևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու թափվում Արաքսը:

Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքսը:

Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62.5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ գարնանային, վարարումները՝ ամռանն ու աշնանը: Ջրի տարեկան միջին ծախսը 22,6 մ³/վրկ է, առավելագույնը՝ 138 մ³/վրկ, նվազագույնը՝ 9 մ³/վրկ, տարեկան հոսքը 712 միլիոն մ³:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

Հրազդան գետի ջրի որակը գնահատվել է «վատ»՝ Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

«Ալ մետ» ՍՊԸ նախատեսվող ձուլարանի հեռավորությունը Հրազդան գետի ամենա մոտ հատվածից ուղիղ գծով կազմում է 60 մ:

4.5. Հողերի բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքին հիմնականում բնորոշ են բաց շագանակագույն, խճաքարային տեղ-տեղ ցեմենտացած հողային տիպեր: Առանձին տեղամասերում հողերը ներկայացված են նաև դարչնագույն հողերի կրազերծված ենթատիպով:

Անմիջապես ներկայացվող տարածքում բաց հողային մակերես կամ բուսաշերտ պարունակող մասեր չկան:

ՇՄԱԳ հիմնական փուլում նախատեսվում է կատարել հողի նմուշառում և «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիայում որոշել հողի աղտոտվածության ցուցանիշները:

4.6. Կենսաբազմազանություն

Սայաթ-Նովա գյուղի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտագոնալ բնակատեղերի առատություն):

4.6.1. Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն)

որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Արարատի մարզում բուսականությունը կիսասանապատային է և անապատային:

Կիսասանապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Օշինդրա-Էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*. *Aeloropus littoralis* (Gouan) Parl.

Անապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. Dendroides* Pall., *S. Nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb.

Դեղաբույսերից տարածված են՝ Տուղտ Դեղատու, Տուղտ հայկական (*Althaea officinalis*, *A. armeniaca*), Իշավարունգ սովորական (*Ecballium elaterium*), Տորոն ներկատու (*Rubia tinctorum*), Սպանդ սովորական (*Peganum harmala*), Փշատենի նեղատերև (*Elacagnus angustifolia*), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus atrosanguinea*):

Հազվադեպ և անհետացող բուսատեսակներից են՝ Գազ տարօրինակը (*Astragalus paradoxus*), Կղմուխ Օշեի (*Inula aucherana*):

Անմիջապես ներկայացվող տարածքում չկա բնական բուսածածկ:

4.6.2. Կենդանական աշխարհ

Ողնաշարավոր կենդաններից հանդիպում են՝ շնագայլ, եղեգնակատու, վայրի խոզ, գյուրգա, ջրասամույր, միջերկրածովյան կրիա, ճահճակուղբ, կաքավ, նապաստակ, խեցգետին, մշկամուկ, անողնաշարավորներից՝ անատամ:

Հազվադեպ և անհետացող կենդանատեսակներից են՝ սովորական երկարատև չղջիկ (*Miniopterus schreibersi* Kuhl), առաջավոր ասիական ծական (*Sabanejewia aurata*), կարգավիճակը՝ անհետացող, ոչ բավարար չափով ուսումնասիրված տեսակ է:

Անմիջապես ներկայացվող տարածքում չկան Կարմիր գրքյան կենդանիներ:

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

«Խոսքովի անտառ» պետական արգելոցը,

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը:

Նշված պահպանվող տարածքները նախատեսվող աշխատանքների իրականացման վայրից գտնվում են զգալի հեռավորության վրա և որևէ ազդեցության չեն ենթարկվի սույն գերծունեության արդյունքում:

4.8. Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները

Ներկայացվող գործունեության ազդակիր է Մասիս խոշորացված համայնքը:

ա. Մասիս քաղաք

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Մայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին համայնքներին: Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ քաղաքամայր Երևանից՝ 17 կմ դեպի հարավ: Մասիսը զարգացել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Վաթսունական թվականների վերջերից սկսած՝ քսան տարվա ընթացքում Մասիսը նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրքի և զարգացած երկաթուղային հանգույցի շնորհիվ ձեռք է բերել հանրապետության խոշորագույն մատակարար քաղաքի կարգավիճակ:

Մասիս քաղաքի հիմնական սոցիալական ցուցանիշները ըստ Մասիսի քաղաքապետարանի պաշտոնական կայքի բերված են ստորև

2020	
1. Մշտական բնակչության թվաքանակը	22831
2. Գրանցված ծնունդների քանակը	137
3. Մահացության դեպքերի քանակը	289
4. Ամուսնությունների քանակը	80
5. Ամուսնալուծությունների քանակը	19
6. Տնային տնտեսությունների թիվը	5454
7. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	559
8. Կենսաթոշակառուների քանակը	2815
9. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1445

բ. Մայաթ նովա գյուղ

Մայաթ-Նովան գյուղ է Մասիսի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 20 կմ հեռավորության վրա:

Գյուղն ընկած է Հրազդան գետի ձախ ափին, Արարատյան դաշտում: Ծովի մակարդակից ունի 827 մ բարձրություն: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում են դեկտեմբերի կեսերին, ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապաստներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների¹ 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Մայաթ Նովա գյուղում մշտական բնակչությունը կազմում է 2188 մարդ:

գ. Նորամարգ գյուղ

Բնակչություն՝ 2003

Նորամարգ (մինչև 1992թ.-ը՝ Կալինին ավան) գյուղը գտնվում է Արարատի մարզում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ափին, Երևանից 24կմ (Մասիս քաղաքից 7կմ) հարավ, Արտաշատ մարզկենտրոնից 22կմ հյուսիս-արևմուտք: Գյուղի հարևանությամբ կան արհեստական խոշոր լճեր:

Գյուղի նորոյա պատմությունը սկսվում է 1988թ.-ից: Մինչև Ադրբեջանից մեր հայրենակիցների բռնագաղթը գյուղը բնակեցված էր թուրքական տարերով քրդերով: Մասիսի շրջանի վարչական միավոր հանդիսացող Կալինին գյուղը ձևավորվել է իբրև առանձին անասնապահական պետական տնտեսություն 1980թ.-ից:

Նորամարգ գյուղի ռելիեֆը հարթավայրային է, թույլ արտահայտված թեքությամբ, ծովի մակերևույթից բարձր 830-840մ: Կլիման չոր է, խիստ ցամաքային: Գերակշռում են աղուտները, իսկ գետամերձ հատվածներում՝ ճահճուտները: Գյուղի տարածքի հողերը բնութագրվում են բաց շագանակագույն գունավորումներով, միջին և ցածր կավ-ավազային կազմով, միջին հզորությամբ և ուժեղ կարբոնատվությամբ: Գրունտային ջրերը գտնվում են 1.5-2.5 մ խորության վրա: Տարածված է կիսանապաստային գոտուն բնորոշ բուսական և կենդանական աշխարհ:

Շատ են կրծողները, սողունները և ջրլող թռչունները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10-12 ջերմաստիճան, նվազագույն՝ -30 ջերմաստիճան, առավելագույնը՝ 40 ջերմաստիճան: Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը 280-300մմ: Գարնանային ցրտահարություններ լինում են ապրիլի

¹ https://www.armstat.am/file/Map/MARZ_03.pdf

կեսերին, իսկ աշնանային ցրտահարությունները դիտվում են արդեն հոկտեմբերի վերջերին:

դ. Միս գյուղ

Մակերես՝ 14.9կմ²

Բնակչություն՝ 1982

Գյուղ Մասիսի խոշորացված համայնքում: Նախկինում ունեցել է Սարվան, Սարվանլար, Սարվանլար Վերին անվանումները: Վերանվանվել է Միս 1989 թ-ին: Գյուղն ընկած է Հրազդան գետի աջ ափին՝ Միջինարաքսյան գոգավորությունում: Տեղադրված է ծովի մակարդակից 828 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -30-ից -50: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Մինչ աշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 29%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 57%, հետաշխատունակները՝ 14%: Գյուղն ունի 535 տնտեսություն:

Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսակն նշանակության հողերը կազմում են շուրջ 370հա: Համայնքի հողերն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 129 հա: Կան խոտհարքեր՝ 74հա: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ձկնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

ա. Այլումին

1 հատ գազային վառարան, հոսքագիծ և թևքային գոտիչների համակարգ:
Արտադրվելու են ձուլակտորներ:

բ. Պղինձ, արույր, ցինկ, նիկել, անագ, ֆեռոհամաձուլվածքներ

2 հատ ինդուկցիոն վառարան, հոսքագիծ և թևքային գոտիչների համակարգ:
Արտադրվելու են ձուլակտորներ, լարեր, տարբեր համաձուլվածքներ:

գ. Կապար

1 հատ ռոտոռային վառարան, 1 հատ ինդուկցիոն վառարան, հոսքագիծ և թևքային գոտիչների համակարգ:
Արտադրվելու են ձուլակտորներ:

դ. Պողպատ

1 հատ ինդուկցիոն վառարան, 1 հատ գազային վառարան, գլոսման հոսքագիծ և թևքային գոտիչների համակարգ:

Արտադրվելու են ամրաններ, ձողեր և այլն:

ե. Տեխնոլոգիական գործընթացներ

Ընդամենը բոլոր տեսակի մետաղների թափոնների առավելագույն քանակը կլինի 2950 տ/տարի:

Նախատեսվում է տարեկան օգտագործել 710000 մ³ բնական գազ:

Բոլոր տեսակի մետաղների ջարդոնը (թափոնները) տեղափոխվելու են պատվիրատուի կամ սեփական տրանսպորտային միջոցներով, համապատասխան լիզենցիա ստանալուց հետո: Դրանք ժամանակավոր պահեստավորվելու են արտադրական տարածքում՝ ծածկի տակ: Թափոնների քանակները ընդունվելու են այնպես, որ ապահովվի 2 – 3 օրվա պաշար:

Մետաղների թափոնները սայլակներով տեղափոխվելու են վառարանային մասնաշենք սայլակներով և բարձվելու են յուրաքանչյուր տեսակը իր վառարանի սնուցման բունկերի մեջ:

Ջերմաստիճանը վառարաններում պահպանվելու են ավտոմատ կարգավորիչներով, համապատասխան մետաղի հալման ջերմաստիճանի տիրույթում, որոշակի ավելցուկով:

Գործարանի շահագործման տարեկան աշխատաժամերը՝ 6912 ժամ/տարի (288 օր/տարի):

5.2. Գազամաքրման համակարգ

Նախատեսվում է տեղադրել թևքային գտիչների հանգույց, նստեցման և հովացման խուց: Նախատեսվում է տեղադրել թևքային գտիչների հանգույց, նստեցման և հովացման խուց: Նշված գազամաքրման համակարգը ներկայում համարվում է ամենաարդյունավետը, այն թույլ է տալիս նվազեցնել արտանետվող պինդ մասնիկները 99.2 տոկոսով:

Նախատեսվում է նաև տեխնոլոգիական պրոցեսի ջերմային ռեժիմի ավտոմատ կարգավորում, որի շնորհիվ ազոտի օքսիդների պարունակությունը հասցվում է նվազագույնի:

Հիմնական ՇՄԱԳ փուլում կհաշվարկվեն օդափոխության ծավալները և կընտրվի համապատասխան օդամղիչ:

Մանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն CH 245 – 71 սանիտարական նորմերի մինչև 3000 տ/տարի հզորությամբ գունավոր մետաղների վերամշակման/ձուլման գործունեության համար սանիտարապաշտպանիչ գոտին սահմանվում է 500 մ:

Ներկայացվող տարածքից մոտակա բնակավայրը Նորամարգ գյուղն է, որը գտնվում է մոտավորապես 680 մ հեռավորության վրա, Մայաթ-Նովա գյուղը՝ 2.4կմ, Միս գյուղը՝ 1.9 կմ, Մասիս քաղաքը՝ 2.3 կմ:

5.3. Օգտագործվող նյութեր և բնառեսուրսներ

Գործարանում նախատեսվում է օգտագործել

- ջուր՝ վառարանների հովացման համար,
- ջուր՝ անձնակազմի խմելու կենցաղային նպատակներով,
- բնական գազ՝ վառարանների ջերմային ռեժիմը ապահովելու համար,
- օդ՝ այրման ռեժիմը ապահովելու համար:

Խմելու որակի ջուր կներկկրվի 20 լիտրանոց բալոններով առևտրային կազմակերպություններից:

Տեխնիկական ջրի համար նախատեսվում է սեփական տարածքում փորել խորքային հոր: Տարածաշրջանը հարուստ է ստորգետնյա ջրերով և տեղանքում առկա են մի քանի չգործող հորեր: Դրական փորձաքննական եզրակացություն ստանալու դեպքում ընկերություն կմշակի պահանջող փաստաթղթեր և կդիմի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն խորքային հորի ձևակերպման և ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

Արտադրական գործընթացներում արտահոսք չի առաջանում, իսկ կենցաղային կեղտաջրերի համար նախատեսվում է կառուցել անթափանց պատերով և հատակով կեղտաջրերի հավաքման հոր, որի պարունակությունը մասնագիտացված կազմակերպությունների միջոցով պարբերաբար կտեղափոխվի մոտակա կոյուղու համակարգ:

Ջրի, օդի և գազի պահանջարկը կհաշվարկվի հիմնական գնահատման փուլում և արդյունքները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

5.4. Արտանետումներ, արտահոսքեր և արտադրական թափոններ

Նախատեսվող գործարանի շահագործման ընթացքում կառաջանան հետևյալ արտանետումները.

Արտանետումներ.

- Ազոտի երկօքսիդ (NO_2),
- Ածխածնի օքսիդ (CO),
- Պինդ մասնիկներ (ՊՄ):

Ըստ նախնական հաշվարկների, արտանետումների ցրման արդյունքում առաջացող աղտոտման մակարդակը 8 – 10 անգամ ավելի քիչ կլինի, քան թույլատրելի սանիտարական նորմերը:

Գործարանի աշխատանքի արդյունքում արտադրական կեղտաջրեր չեն առաջանում, քանի որ ջուրը օգտագործվում է միայն հովացման համար, որի արդյունքում նյութերի հետ շփում տեղի չի ունենում և արտահոսք չի առաջանում:

Գործարանի շահագործման արդյունքում կառաջանան հետևյալ արտադրական թափոնները.

- «Գունավոր մետաղների ձուլումից գոյացած խարամ», ըստ ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայր/ նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի դասիչ՝ 3120030001013:
- «Մաքրագոտիչներից փոշի՝ գունավոր մետաղների պարունակությամբ», դասիչ՝ 31201700 01 01 3:

Կարող են առաջանալ նաև՝ «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/», դասիչ՝ 9120040001004:

Արտանետումների, թափոնների և ջրօգտագործման քանակները կհաշվարկվեն և կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

**6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ,
ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

6.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են օգտագործվող թափոնների հետ գործակցության և վառարանների ջերմային ռեժիմի ազդեցության հետ:

Ջարդոնի հետ աշխատանքը պարունակում է ռիսկեր սպասարկող անձնակազմի համար:

Վառարանների շահագործման ընթացքում առաջանում են ծխագազեր, որոնք պարունակում են վտանգավոր նյութեր, մասնավորապես՝ ազոտի և ածխածնի օքսիդներ և պինդ մասնիկներ: Արտանետումների ստույգ քանակները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Հուլիսի և արտադրատեսակների տեղափոխությունը նախատեսված է ավտոբանասպորտային միջոցներով, ինչը կինտենսիվացնի ճանապարհային երթևեկությունը: Սակայն հաշվի առնելով երթերի փոքր հաճախականությունը, երթևեկության վրա ազդեցությունը էական չի լինի:

6.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

Բնապահպանական.

- Մետաղների ջարդոնը տեսակավորել համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորել հատուկ հատկացված պահեստային տեղամասերում:

- Վառարանները կահավորել բազմաստիճան մաքրման համակարգով:

- Վառարանների հովացման համար կիրառվելու է փակ շրջանառու համակարգ:

- Արտադրական հանգույցը պետք է ունենա հակահրդեհային համակարգ:

- Նախատեսվում է մշակել և կիրառել սանիտարապաշտպանիչ գոտու տարածքի օդային ավազանի մոնիթորինգ, որի մանրամասնությունները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Սոցիալական և աշխատանքի պաշտպանություն.

- Պարբերաբար նախատեսվում է իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների և վառարանային հանգույցի մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում սարքավորումների կարգաբերում:

○ Թափոնների հետ աշխատելիս անձնակազմը կրելու է հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ, սաղավարտներ և արտահագուստ:

○ Սպասարկող անձնակազմը անցնելու է նախնական և պարբերական հրահանգավորում:

○ Տեղամասերի ղեկավարները պարբերաբար մասնակցելու են որակավորման բարձրացման դասընթացներին, այդ թվում նաև առցանց:

○ Գործարանում նախատեսվում են՝ հագստի սենյակ, լոգարան, սանհանգույցներ, սննդի ընդունման սենյակ, բուժ.կետ:

○ Անձակազմի ընտրության ժամանակ նախապատվություն է տրվելու տեղի բնակչությանը:

○ Արտադրական հանգույցում աշխատող անձնակազմը պարբերաբար ենթակրվելու է բժշկական զննման և անհրաժեշտության դեպքում բուժման:

○ Արտադրական հանգույցում աշխատողների տարեկան արձակուրդը կլինի ավելին քան օրենքով պահանջվող ժամկետը:

○ Առավել հաշագրգռված աշխատակիցներին պայմաններ են ստեղծվելու մասնագիտական գիտելիքները կատարելագործելու համար:

Հակահրդեհային միջոցառումներ.

- Արտադրական տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր:
- Գազամատակարարման համակարգը կապահովվի ձայնային և կուսային ազդանշանային սարքերով
- Աշխատակազմը պարբերաբար կհրահանգավորվի հակահրդեհային պահանջների վերաբերյալ:

Կանաչապատում

- Նախապատրաստման աշխատանքներից հետո ազատ տարածքներում նախատեսել կանաչապատում, որը կներառի սիզամարգ և տեղի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառեր և թփեր
- Ապահովել կանաչ տարածքի ոռոգման համակարգ

Նախատեսվող միջոցառումները և դրանց կատարումը վերահսկող միջոցառումները բերված են աղյուսակի տեսքով:

Ընկերությունը պարտավորվում է մասնակցել համայնքի տարեկան սոցիալական ծրագրերի իրականացմանը, իր հնարավորությունների սահմաններում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
<p>Ձուլարանի շահագործում</p>	<p>ա/ Մթնոլորտային օդի աղտոտում</p> <p>բ/Թափոնների կառավարում</p> <p>գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Մետաղի ջարդոնը տեղափոխել ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով:</p> <p>Թափոնները պահեստավորել փակ շինության մեջ:</p> <p>Պարբերաբար ստուգել գազափոշեմաքրման համակարգի աշխատանքը:</p> <p>Արտադրական թափոնները հավաքել և կրկնակի օգտագործել՝ խառնելով ջարդոնի նոր ծավալների հետ:</p> <p>Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում: Կանոնավոր աղբահանում:</p> <p>Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>Ձուլարանի տարածքում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ:</p>	<p>Կազմակերպել տարածքի աղտոտվածության մոնիթորինգ, չափելով ածխածնի և ազոտի օքսիդների, փոշու պարունակությունը</p> <p>Արտաքին ստուգումներ</p> <p>Արտաքին ստուգումներ</p> <p>Արտաքին ստուգումներ</p>	<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Մասիսի քաղաքապետարան</p> <p>ԱՆ առողջապահական տեսչական մարմին</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
	<p>դ/ Տարածքի բարեկարգում և կանաչապատում</p>	<p>Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p> <p>Արտադրական տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր:</p> <p>Նախապատրաստման աշխատանքներից հետո ազատ տարածքներում նախատեսել կանաչապատում, որը կներառի սիզամարգ և տեղի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառեր և թփեր</p> <p>Ապահովել կանաչ տարածքի ոռոգման համակարգ</p>	<p>Արտաքին ստուգումներ</p> <p>Արտաքին ստուգումներ</p> <p>Արտաքին ստուգումներ</p>	<p>ԱԲՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն</p>

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծախսերը կհաշվարկվեն և կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 4 հունվարի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՎԱՀԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԵՎԳԵՆԻԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Սայաթ Նովա Մասիս-Ռանչպար խճուղի 10/1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր կնքված 28/11/2022թ. սմ - 16306, համայնքի ղեկավարի 28.12.2022թ. թիվ 6341-Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-082-0308-0010

Մակերեսի չափը (հա)՝ 1

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 04012023-03-0045, գաղտնաբառ՝ ICPCM8NKAQZC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով